ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2026 թվականի N 469-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԹՈՒՋՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացի Խաչիկ Փարավոնի Մարտիրոսյանի Դ-151 դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող /վկայական՝ 09092022-05-0014, տրված 09.09.2022թ./ հողամասից հրաժարվելու մասին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Քաղաքացի Խաչիկ Փարավոնի Մարտիրոսյանի կողմից հողամասից հրաժարվելու մասին 14.04.2026թ. թիվ Դ-151 դիմումի հիման վրա սեփականության իրավունքով նրան պատկանող Ճամբարակ համայնքի Թթուջուր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 05-037-0203-0001 կադաստրային ծածկագրերով 2.11669 հա մակերեսով բնակավայրի գյուղատնտեսական նշանակության հողամասը /արոտավայր/ ճանաչել որպես համայնքային սեփականություն:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով՝ 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հաստատող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. ապրիլի 14
ք. Ճամբարակ